50. ՏՈՒՏԻ ԽՈՒՇԻՆ

Կէղնին, չէղնին իրեք մարդ կէղնին։ Կէղնին հ՚իրարու ախպեր, կէլնին, կէրթան խուրրաթ օր աշխատեն։ Կէրթան, կէրթան քաղաքըմ կէլնին դուրս, էդ էրկու ախպերն կէրթան ուրանց գործ կըգտնան, կաշխատին, մեկ ախպերն կմնա պարապ։

Ավուրըմ մեկ էդ տղեն շուկի մեջ կօլըրդեր, էնդիեն մարդըմ էկավ։ Ասեց.—Տղա՛, ի՞նչ կօլըրդիս։

Տղեն ասեց.—Պարապ կօլըրդիմ, գործըմ կփնտրիմ։

Էդ մարդն ասեց.—Տղա՛, չէղնի՞ս ընծիկ մշակ։

Ասեց.—Հ՚որի՞ չըմ էղնի։

— Տղա, գինա՞ս քու բան ու գործ ի՞նչ է։

Ասեց.—Ես ի՞նչ գինամ, ցուցու օր գինամ։

Ասեց.—Քու գործն էդա է, հ՚ըմնօր կխուրդիս քսան, հ՚եռսուն օսկի, կըլնաս չանթի մեջ, կառնիս ու կընկնիս իմ հ՚առջև։ Լուսմութ տնեն կիգանք շուկեն, հ՚իրկուն շուկից կէրթանք տուն՝ կցըրվիս ֆախիր-ֆուխարին։

Տղեն ասեց.—Թըղ էղնի։

Հըմնօր լուսուն կէլներ առներ ղչանթեն, կընկներ աղի հ՚առեջ, փարեն կհաներ ցըրվեր ֆախիր-ֆուխարին, կէրթեր շուկեն, զա-

ղեն կտաներ ուր դուքան ու կթորկեր կիգեր տուն։ Հ՚իրկուն օր էղ-ներ, կէրթեր շուկեն, կընկներ աղի հ՚առեջ, զչանթեն կէձգեր վիղ, զփարեն կցրվեր, կառներ, կիգեր տուն։ Էդ էր էգ տղի բան ու գործ։ Թե էրկու, թե իրեք տարի մնաց էդ մարդու խեչ։

Ասեց.—Աղա՛, ես կէրթամ իմ հ՚էրկիր, ղիմ հախ տուր։

Աղեն է, բերեց ղիրեք տարվան հախ դոյունճա տվեց տղեն, բաշխիշ լէ ուրիշ, հ՚էլավ առավ էկավ շուկեն, զընկերտանք գտան, հ՚ընկան ճամբախ էկան։ Էկան քանիմ՚ ավուր խոնախ, հ՚իրկուն օր մըսաֆըր էղան, վերցուց էն մեկ ախպերն ասեց.—Ախպե՛ր, դուք գացեք խուրբաթ ու հ՚էսօր կդառնաք կէրթաք ձըր տներ, վաղ հարցուն ձինե, ասին՝ ի՞նչ տեսաք խուրբաթ, դուք ի՞նչ կասիք, հըմկա հ՚ոգա հեղրմ թարիֆ էրեք, օր էնտեխ չմոռնաք։

Էդ էրկու տղեն է, խահվախանեն գացած են, մեխանեն գա-ցած են, բոզխանեն գացած են, ինչ օր տեսած են, պատմեցին։

Էն մեկէլ տղեն ուր աղի տնից դուրս չըր հ՚էլնի, տնեն գացեր էր շուկեն, շուկից էկեր էր տուն, ասեց.—Ես բան չըմ դինա։

Ախպըրտանք ասին.—Դու էդխդար մանցիր քու աղի տուն, իսկի բան չտեսա՞ր։

Տղեն ասեց.—Չէ՛, վալլա, մենակ էդա խդար գինամ, լուսուն կէլնեք, կէձգենք զիմ չանթեն իմ վիզ, կընկնենք իմ աղի հ՚առեջ, կէրթենք շուկեն, կհանենք զփարեն, ցրվենք ֆախիր-ֆուխարին վրեն, հար հասնենք աղի դուքան։ Հ՚իրկուն մեկ լէ հըմալ կէձգենք զիմ չանթեն իմ վիզ, կընկնենք իմ աղի հ՚առեջ, կհանենք զփարեն, ցրվենք հար հ՚իգենք տուն, իս էդ խդար բան իմ տեսի։

Ախպըրտանք ասին.—Շա՛տ աղեկ, դու իրեք տարի մանցիր քու աղի մոտ, իսկի չհարցուցի՞ր. «Աղա՛, դու ղէղա փարեք հ՚ո՞րի կցրվիս»։

Տղեն ասեց.—Չէ՛։

Շատ աղեկ.—Վաղ էրթաս հ՚էրկիր, էնիս խըսա, ի՞նչ կասին քզիկ, կասին ի՞նչ խդար բիլմազ է էդի օր չհարցուցեր է, «Աղա՛, դու ղէղա փարեք հ՚որի՞ կցրվիս»։

Տղեն ասեց.—Վալլայի, ձըր խոսք օղորդ է, առեք զիմ փարեն, տարեք թասլիմ էրեք մըր տուն, ես կէրթամ, կհասկնամ ու կի-գամ։

Զփարեն հանեց տվեց ընկերներու մոտ ու թորկեց էկավ։ Էկավ դեմ գնաց աղի տուն։

Աղեն տեսավ, ասեց.—Տղա՛, դու ու հ՝ողա՞, չէ՞ դու գացիր քու հ՝էրկիր։

Տղեն ասեց.—Աղա՛, վալլայի, գացի, մեկ լէ կես ճամբուց դառցա էկա հետ։

Աղեն ասեց.—Տղա՛, հ՝ո՞րի էկար։

Տղեն ասեց.—Աղա՛, ես իրեք տարի մանցի քու մոտ, հ՝ըմնօր լուսուն կէլնեք, փարա կցըրվենք, կիգենք տուն, չհասկցա էղոր մանեն ի՞նչ է, հըմկա էկեր իմ օր ղէդօր մանեն հասկնամ քինե ու դառնամ էրթամ։

Աղեն ասեց.—Տղա՛, կէրթաս Հալբպու քաղաք, ճամբու վրեն քոռըմ կա նստուկ, հ՝ընցնող կթըքու հ՝էրես կընցնի, դառցող կթըքու հ՝էրես կընցնի։ Գնա հասկցիր, թե էնդոր հ՝էրես հ՝ո՞րի կթքուն ու կընցնին դառնան, էկո ասե ընծիկ, ասիմ քղիկ. հ՝որի՞ն լուսուն կէլնենք փարա կցըրվենք, կէրթենք իմ դուքան։ Հ՝իրկուն կէլնենք դուքնից կցրվենք, կիգենք տուն։

Տղեն է, բարիմնաս էղավ, հ՝էլավ հ՝ընկավ ճամբախ ու էկավ։ Էկավ օր մոտեցավ Հալբպու քաղքին, տեսավ օր էրկու աչից մոտեն մահրում հալվորըմ նստուկ է վըր ճամբուն. հ՝ընցնող մեկ ճըլոթ կզարկե, կթքու հ՝էրես, կընցնի, դառցող մեկ ճըլոթ կզարկե, կթքու հ՝էրես, կընցնի։ Մոտեցավ, բարև տվեց, առավ ղբարև, ասեց.—Աբո՛, էդ հ՝ո՞րին, որն օր հ՝ընցնի ու դառնա ճըլոթըմ կզարկե քու հ՝էրես, կթքու ու կընցնի, մանեն ի՞նչ է։

Հալվորն ասեց.—Լաո՛, իմ դարդ շատ է, կառնա՞ս չհարցուս։

Տղեն շատ յալվար-յախամիշ էղավ։

Հալվորն ասեց.—Լաո՛, կէրթաս Իսպահանու քաղաք, էնտեխ դարբինըմ կա, դրեր է պաղ էրկաթ վըր քարին, կծեծե, կռանըմ կզարկե, կէլնի դուրս, կիշքե ու կդառնա կիգա ներս։ Գնա էնդոր խեչ, հասկցիր, թե ի՞նչ է սապապ, օր էն մարդ կդնե պաղ էրկաթ վըր սալին, կզարկե կռանըմ ու կվազե դուրս կիշքե, կդառնա կիգա ներս, ասի ընծիկ զէնդոր մանեն, ես լէ ասիմ՝ զիմ, հ՝էլի՛ գնա։

Տղեն հ՝էլավ, թորկեց, գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, գնաց Իսպահանու քաղաք հ՝էլավ դուրս, հարցուց զէդ դարբնի դուքան, գտավ, գնաց կանավ դուքնի դուռ, տեսավ օր օղորդ՝ էդ դարբին դրեր է պաղ էրկաթ վըր սալին, կռանըմ կզարկե, կթռնի, կէլնի դուրս, կիշքե ու կդառնա, կիգա, կռանըմ լէ կզարկե։

Տղեն մոտեցավ, հարցուց, ասեց.—Ուստա՛, սապապ ի՞նչ է,

օր դրեր իս պաղ էրկաթ վըր սալուն, կզարկիս կռանըմ, կվազիս, կէլնիս դուրս, կիշքիս, կդառնաս կիդաս, կռանըմ լէ կզարկիս։

Դարբինն ասեց.—Հ'էսօր մանցի հ'ողա, հ'իրկուն արի էրթանք մըր տուն, քղիկ ասիմ մանեն ի՞նչ է զպաղ էրկաթ կդնիմ վըր սալին, կռանըմ կզարկիմ, կէլնիմ դուրս, կիշքիմ ու կդառնամ կիգամ։

Մնաց, հ'իրկուն հ'էլավ գնաց դարբնի տուն, էղավ մսաֆըր. կերան ղուրանց հաց, խմեցին ղուրանց ջուր։

Դարբին վերուց ասեց.—Տղա՛, գինա՞ս մանեն ինչ է, օր կդնիմ պաղ էրկաթ վըր սալուն, կռանըմ կզարկիմ, կէլնիմ դուրս կիշքիմ ու կդառնամ, հ'իգամ մեկ լէ կվերում զարկիմ։ Ես էդա քաղքի ուստեն ենք, իմ անունը ադլըմ էր, էն կասեր ֆըլան դարբին, էն կասեր ֆըլան դարբին։ Էլօղլին, թե օր լոզըմ շիներ քսան խոռշի, ես կշինեք քառսուն խոռշի, մանզղոնըմ շիներ հինգ խոռշի, ես կշինեք տաս խոռշի, գերնդիմ՝ շիներ տաս խոռշի, ես կշինեք քսան խոռշի, հ'էրկիր հ'էրկրով ղուրանց հաճըթներ իմ խեչ կբերին իտեն շինել, տարեկան տաս հազար խիտր էրկաթ կբաներ իմ դուքնի մեջ։ Ավուրըմ մեկ էկան, ասին՝ հավքըմ էկեր է նստի էդա իմ դիմու ծառի վրեն, հուր ու հաշամ քաղաք քաղքով, հ'էրկիր հ'էրկրով թափավ էկավ էդ հավքի թամաշեն, ես ձեն չըմ հանի, կախեր իմ զիմ գլուխ ու իմ բանին, գործուն կիշքիմ։ Մեկ լէ տեսնամ քանիմ՝ ասնաֆ մտան ներս, անին. «Ուստա, դու լէ հ'էլի ղէդա հավք թամաշա էրե, հա՛ կէնինք չթռնի, հո՛ւ կէնինք, չթռնի, հմալ հավք աշխրքիս մեջ չէղեր է»։ Ասի. «Ես ինչ կէնիմ ղհավք, հավքի թամաշա էնողն թըղ էրթա զուր հավք թամաշա էնե»։ Բռնին զորով իմ ձեռքեն զիմ կռան առան, դրին վըր սալին, առան զիս ուրանց հետ ու գացին։ Գացինք կանաք ծառուց քիչըմ հեռուն, թամաշա կէնեք, մեկ լէ տեսնամ, էդ հավք թռավ, հ'իջավ էկավ իմ հ'առեջ, ասեց. «Հ'էլի վըր իմ թևերուն»։ Հ'էլա, վերցուց զիս, յալա՛, հ'ո՞ւր իս, բաղ ու բաղչիմ՝ մեջ դրեց, օր դիլինան թարիֆ օլմազ, ախչայինան մեյդանա կյալմազ*։ Հըմալ բաղ ու բաղչա աշխըրքի մեջ չէղեր էր. մեկ թարաֆեն բլբուլ օթմիշ կէներ, մեկ թարաֆեն մարմար հավզի մեջեն կըլ-կըլ հ'աղբուր կթալեր, վարդ ու մանուշակն ծառերու տկտեք բացվեր էր, կզարկեր մարդու գլխեն կէրթար։ Տարավ զիս էդ հավզի մեջ դրեց, մեկ լէ տեսնամ իրեք հատ հուրնիկ-հրեղեն աիչիկ զիմ բոլոր փաթեցին, առոք-փառոք զիս վերցին ու-

* Լեզվով չպատմվի, քարով չշինվի (Ծ. Բ.)։

բանց թևերու վրեն ու առան գացին բաղնեք, աղեկըմ համամլանմիշ էրին, սերսբեցին, բերին ձեռքըմ խաս-խաս հալավ հագուցին ու առան գացին դիվանըմ։ Դիվա՜ն, աստված զքու տիրու տուն շինե։ Գիշեր ցերեկվան պես լուս կիտեր, խալիներ փռուկ ին տակ. բըրդե մինգրներ վրեն, խուշթույլի բարձեր զարկուկ պատ. բերին տեխըմ թալին ու զիս դրին վրեն։ Ասին՝ օրական իրեք հեղ կուտիս, կխմիս, մարդու դավին խառըշմիշ չըս էղնի, սիրտդ օր կնեղենա, բազի-բազի հեղ կէլնիս օլըրտիս, մեկ լէ կդառնաս կիգաս վըր քու տեխըն կնստիս։ Քիչըմ լէ մանցի, տեսնամ գացին, ախչիկըմ առան, ախչիկ մասի՞ քու տուն շինվի ու քու ախչկան, տսնուհինգ ավուր բոլոր լուսնյակ ասին՝ էդա լէ քու կնիկն է։ Ասի էդա հըմլա բան լէ կէղնի, հընկա իմ մոր փորու մեջ, օրական իրեք հեղ կուտիմ զիմ անուշ-չանուշ ու կպառկիմ քնիմ, էնգահ օր սիրտս կնեղենա, կէլնիմ կէրթամ խաս բաղչի մեջ կօլըրտիմ, մեկ լէ կդառնամ կիգամ, հ՚ընկնիմ վըր իմ յաթղին։ Ինչ հ՚ուզիմ հազր, կնիկ հ՚ուզիմ՝ հանդե կշտիս հետ, հաց հ՚ուզիմ՝ էն գան կիգա, ջուր հ՚ուզիմ, չայ հ՚ուզիմ՝ էն տեսակ։ Ախչիկըմ լէ կա, օրական էրկու հեղ կտաքցու ջուր, կբերե զիմ օտներ կլվանա, կառնե զջուր ու կէրթա։ Ի՞նչ գլխու ցավանք էնիմ, տղա՜, էդ քյազալըքով հինգ-վեց տարի մանցի էդ տեխ, ընծիկ էդ ախչկաց էղավ իրեք ճիժ, էրկուս տղա, մեկն ախչիկ։ Ավուրըմ մեկ իմ կնիկ գացեր էր ուր հոխպոր ախչկա հարսնիք, էդ բեսլամեն էկավ զիմ օտներ կլվաներ, իմ սիրտ չփոմա՞ էդ ախչիկ։ Ասի. «էդա հ՚իգամ, էդա էրթամ զքզիկ հետ իտամ առնիմ»։ Բեսլամեն ասեց. «Աղա՜, խուրբան իմ քի, հ՚իսնե վազ էկո, իմ խաթուն հ՚իմաստուն է, կկռահե, կիգա զքզիկ տուն չթողե»։ Չէ, չարն հեղըմ մտեր էր իմ հ՚անթապ, ասի.—Հազար քինե ու քու խաթունից էղնի, զքզի հետ իտամ առնիմ, կուզիս թըղ հ՚իգա, զիս էնե տնեն դուրս։

Խաթուն լէ էդ հ՚իրկուն կիգեր։ Նրֆսիս վրեն չկարցա, զախչիկ թալի գետին ու հեծա վըր փորուն, աղեկըմ զիմ քեֆ հասըլցուցի, ասի՝ գրհ, հ՚էլի՜ գնա։

Հ՚էլավ լվաց զիմ օտներն ու թողեց գնաց։

Մանցինք, հ՚իրկուն էղավ խաթունի գալու վախտ, կանչի զէգ ախչիկն, ասի. «Ախչի՜, իմա՞լ կէղնի, օր խաթուն կռահե»։ «Վահո՜ւ, հըմկա էնի շուտ է կռահի։ Մեկ ճար կա. օր էկավ, կգրկիս զքու էրկու էրեխեք կէլնիս հ՚առեջ կասիս. «Քու աստծու բաղդն իմ ընկի, ի՜նչ կէնիս էրե, էդա երեխեսներուն խաթըր էրե»։

«Հայ,—ասաց,—քու սորվըցնողի վիզ կոտրի, դիր զէրեխեք գետինն։ Դրի։ Ասեց.—Տուտի խուշի՝ կվերցուս զէդա մարդ քու թեվերուն, հ'ուսդեն օր բերեր իս, մեկ լէ կտանիս, էնտեխ կդնիս ու կդառնաս կիգաս։

Տուտի խուշին էկավ իմ հ'առեշ կանավ, ասեց. «Հ'էլի վըր իմ թևերունն։ Հ'էլա, առավ զիս ու բանձրացավ, մեկ լէ տեսնամ, բերեց իմ դուքնի հ'առեշ դրեց, զարկի վըր գլխուս ու աչքերուս, ասի՝ էդ ի՞նչ էր էրի։ Գացեր էր ձեռքես, ի՞նչ կառնեք էնեք։

Հըմկա էդոր համար դրեր իմ զպաղ էրկաթ վըր սալին, կռանըմ կղարկիմ ու կվազնիմ կէլնիմ դուրս, աճայեպ Տուտի խուշին չէկա՞վ, մեկ լէ կդառնամ հ'իգամ ներս։

Տղեն պառկավ քնավ, հ'էլավ լուսմութ, շնորհակալ էղավ դարբնից, հացըմ էրկու առավ, չըքցուց ուր մեշք ու հ'ընկավ ճամբախ, գնաց։ Շատ էկավ, քիչ էկավ, էկավ հասավ էդ ճամբու վրեն նստող քոռու մոտ, օր հ'ընցնող կթքու հ'էրես, ճըլոթըմ կզարկեր, սորա կընցներ, դարցող կըթքու, ճըլոթըմ կզարկե հ'էրես, սորա կընցնի։

Ասեց.—Աբո՛, դացի դարբնի խեչն ու էկա, դարբնի գլուխ դալածն էդա է։

Իմալ օր մինք պատմեցինք, հըմալ մեկիկ-մեկիկ էդ քոռուն պատմեց։

— Քում ի՞նչ է։

— Իմ, լառ՛։

— Հա՛։

— Ես,—ասեց,—խաթրճի բաշի ենք, ընծիկ քառսուն հատ շորի կեր, էն կասեր՝ ես իմ, էն կասեր՝ ես իմ։ Ավուրըմ մեկ տուն նստուկ իմ, տեսնամ կարճ սատանեմ՝ էրեց խրսմին սատանա կէղնի, բըլե էնդոր սուճ չկա, հ'ըմեն իմն է, զարկեց զդուռ, մտավ ներս։ Ասեց. «Խաթրճի բաշի, ընծիկ քառսուն բեռ ապրանք կա ֆըլան սարու գլուխ, բեռան օսկիմ կիտամ, չըս հ'իգա՞ բերիս։ Ասի. «Հ'ո՞րի չըմ հ'իգա, նստիր իմ էդա տեխ պարապ-սարապ ի՞նչ կէնիմ։ Էնոր ջորիք մնան ներս կանուկ, հափ-հագըր կէրթան կարծին, զիմ հախիք լէ կառնիմ կիգամ։

Հ'էլա զքառսուն շորին լէ սամրեցի, հեծա զիմ փալան, հընկան իրիցու հ'ետև. հ'ոդա չէ, հ'ոդա է, հ'ոդա չէ, հ'ոդա է, գացինք սարում գլուխ հ'էլանք դուրս։ Էրեց հանեց գիրքըմ, կարդաց. դուռըմ բացվավ մըր հ'առեջ, գացինք ներս օր, ի՞նչ իշքեմ, աշխրքի

մալ ու թամալ օր կասին հ'ոդ է լրցուկ, բարցանք զմբր բեռներ, հ'էլանք կիզենք, տեսա օր էրեց ձեռք թալեց օսկի շամդանըմ վերցուց, դրեց ծոցք, ինչ օր արևու պես կվառվեր։ Քշեցինք զմբր բեռներ, էկանք. էկանք ճամբու կեսն, ես ընծի ասի. «Ջանըմ, ջորիներ իմ, թևներ իմ, բարցող ես, ես հ'որի՞ն պիտի իտամ զէղա քառսուն բեռ օսկին ու արծաթ էգա էրեց տանե ուտե, վալլա՜յի, օզյաթըմ պիտի հանեմ էդ իրիցու գլուխ»։

Ասի. «էրե՛ց, գինա՞ս զքզիկ պիտի սպանիմ»։

«Օրհնա՛ծ, հ'որի՞ զիս կսպանիս, իմ էրածն ի՞նչ է»։

«Զէգա քառսուն բեռ ապրանք դու մենակ հ'որի՞ պիտի տանիս ուտիս։

«Օրհնա՛ծ, ո՞ր կասե, ո՞ր կասե ես մինակ պիտի տանիմ ուտիմ, ես ուխտ իմ էրի, օր զքզիկ չզրկիմ, հայտե, տաս բեռ քզիկ, հիսուն բեռ ընծիկ, քըշե էրթանք»։

Ասի. «Վալլայի, էրեց, աղեկ»։ Քըշինք զմբր բեռներ էկանք, էկանք թե ավուրըմ խոնախ, թե էրկուս, չէ՞ չար օր մտնի մարդու խալբ, միշտ կթնդե, ասի՝ ջանըմ էրեց հ'որի՞ աղեկ պիտի ասե. հիսուն բեռ օսկին ու արծաթ էրեց ի՞նչ կէնե, քա՞ր է թալի, թև՞ն է ցավցի, ես զեռսուն բեռ ապրանք չըմ իտա քզիկ։

Ասի. «էրեց, հազրե զքզիկ, էկա քու շանս»։

«Հ'որի՞, օրհնած, հորի՞ն»։

Ասի. «Ես հ'եռսուն բեռ ապրանք չըմ իտա քզիկ տանիս, քառափուլ մա՞լ իս գտի»։

Տերտերն ասեց. «Օրհնած, ես հեղըմ իմ ասի, զքզիկ ռազի կէնիմ, զքզիկ մահրում չըմ հանի, կես՝ քզիկ, կես՝ ընծիկ»։

Ասի՝ վալլայի, էրեց աղեկ կասե, նազանութեն իմ թարաֆն է, տերտեր մեղա ի աստծու, ես չգիտցողութեն կէնիմ, դու վրա չըբրռնիս։

Էկանք քիչըմ տեխ լէ, մեկ լէ սատանեն մտավ հ'իս, հեծա սատանի ձին ու կանա. «Տերտե՛ր, վալլայի, անգրող զքու հոգին կառնիմ, զէգա քսան բեռ ապրանք չըմ իտա քզիկ տանիս»։

«Օրհնա՛ծ,—ասեց,—դու հ'որի՞ն իս հեծի ղսատանի ձին ու կանի, քու հ'երսով մո՞ւր կա, հայդե հ'եռսուն բեռ քզիկ, տաս բեռն՝ ընծիկ»։

Հեչ էղա՞ծ բան է, սրթրում ու ղադրո՞ւմ ունիմ. քիչըմ տեխ գացինք, մեկ լէ ձեռքս թալի իրիցու փողպատ, վել հասըլ զքառսուն բեռ առա։ Քշեցինք զմբր բեռներ էկանք։ էկանք Հալբրու

.քաղքին մոտեցանք, էկանք էդա տեխ օր նստուկ ինք, իմալ օր նստեր իմ, դրա հմալ նստուկ իմ, միտքս հ'ընկավ շամդան։ Ասի. «Իրիցու ծոցք շամդանըմ լէ կա, վալլայի, չուր զէնի չառնիմ, պիտի չթորկիմ էրթա»։ Ձեռքս թալեցի մուրուք։ Ասի. «էրե՛ց, յա՛մ զքու ծոցու շամդան լէ կհանիս իտաս, յա՛մ զքու հոգին անբարեխոս կառնիմ»։

Տերտերն թալեց զձեռք ծոց, հանեց շամդան, գունդրմ թքուց իմ հ'էրես, ասեց. «Առ, էն լէ զքզիկ, աստծու կրակ լէ քզիկ»։

Մեկ լէ տեսնամ քոռցա, նստա հ'ոդա ու աստծու կրակ էկավ վրես։ Իմա՞լ էղավ տերտեր, իմա՞լ էղան բեռներ, էլ չըմ դինա։ Մանցի հ'ոդա նստուկ, ձեն ցվրվավ աշխարհ, թե չասիս՝ ֆըլան խաթրճու բաշու գլուխ հըմլա բանմ՝ է էկի. օրն օր լսեց, ընծիկ մեղադրեց, ասեց՝ թո՛ղ, տեղն է։ Էն օրնէ հ'էսօր նստուկ իմ վըր էդա ճամբուն, էլ ճանչցածին, չճանչցող լէ կասե՝ հալբաթ էդոր մեշ բանըմ կա, կասե՝ կանի ես լէ թքում. հ'ընցնող կթքու, ճըլոթըմ կզարկե ու կընցնի կէրթա։ դարցող կթքու ու ճըլոթըմ կզարկե, կընցնի կէրթա։ Իմ գլխու գալած լէ էդա է։

Տղեն շնորհակալ էղավ, հ'ընկավ ուր ճամբու հետն ու էկավ, էկավ գնաց աղի մոտ։

Աղեն տեսավ, ասեց.—Տղա՛ էկա՞ր։

Տղեն ասեց.—Հա՛ր վալլա՛յի էկա։

Ասեց.—Ձքոռու գլխու գալածն հասկցա՞ր։

Տղեն ասեց.—Աղա՛, հա վալլա՛յի, հասկցեր իմ ու էկի նստի թարիֆ էնիմ քզիկ։

Աղեն նստավ։ Տղեն է, իմալ օր մենք մեկիկ-մեկիկ թարիֆ էրինք, հըմալ մեկիկ-մեկիկ զէդ քոռու գլխու գալածն պատմեց ուր աղին։

Ասեց.—Աղա՛, հըմկա քոռու պատմութեն էդա է, քում ի՞նչ է, օր կհ'էլնիս լուսուն փարա կցրվիս վըր ֆախիր-ֆուխարին, կէրթաս քու դուքան, հ'իրկուն կդառնաս, փարա կցրվիս կիզաս տուն։

— Ի՞մ,—ասեց աղեն։

— Հա՛, քում,—ասեց տղեն։

— Տղա՛, լաո՛, մենք քառասուն հ'ընկեր, քառասուն հարամի ենք։ Սարեր, ձորեր կօլըրդենք, ջըրդութեն կէնեք։ Ավուրըմ մեկ թագավորըմ հ'էլեր էր էկի վըր մըր թագավորին կռիվ։ Մըր թագավոր լէ, հ'էլավ քոմեց զուր մարդիկ, գնաց կանավ էդ թագավորի հ'առեջ։ Իմալ էղավ թե շաբաթըմ զարկինք հ'իրարու, թե էր-

կուա, աստծուց է՞ր, մարդուց է՞ր, մենք կոտորվանք, բառտա-բառտին հ՚ընկավ մըր մեջ, իմալ հըմկա օսմանցին կփախնի, մենք փախանք, թագավորն ու ուր ասքյար դիովըմ փախան, մենք քառսուն հարամիք լէ դիովըմ փախանք։ Փախանք էկանք հ՚ընկանք քար ու քոի, փուշ ու փշրլի մեջ, կորցուցինք զճամբախ, մեկ լէ տեսնամ խուպլի ղին բութեմ՝ ամպ հ՚էլավ, ասի. «Տղա՛, կեցի փախեք, հմկա հեղեղ ըմղիկ կվերու»։ Իմ ասելն ու շըրըփալն մեկ էղավ, խոմ էլ անձրևն էր, հ՚էրկինք պատռավ ու էկավ ցած, հեղեղըմ հ՚էլավ։ Աստված ինք նշանց չի տա։ Վերցուց ըմղիկ ու գնաց։ Իմա՞լ էղան իմ հ՚եռուն ու ութ ընկերները, չըմ գինա, մեկ լէ տեսնամ՝ ես ու մեկ ուրիշ հ՚ընկերըմ հասանք հ՚իրար, բռնեցինք զիրարու ձեռք ու գացինք քարում՝ հառեշ ասըվանք. նը՛ էնղին կառնանք էրթանք, նը՛ հետ կառնանք դառնանք։ Մանցինք էդ քարու հ՚առեջ։ Հար անձրև կտրեց, հէլանք, հըմալ թուլուկ տվինք զճամբախ հ՚առեշ մի, հ՚ո՞ւր կէրթանք, հ՚ո՞ւր չէրթանք, մենք լէ չընք գինա։ Ինչ գլխու ցավանք էնիմ քզիկ։ Էկանք, էկանք քաղաքըմ հ՚էլանք դուրս, զմըր ձիաննու գլուխ թորկինք, գացին դուռըմ կանան. գացինք էդ տուն մսաֆըր էղանք, քաշին զմըր ձիանք կապին։ Հ՚էլանք վի նստանք, բարև տվինք, զմըր բարև չըն առնի, կխոսանք հետ ուրանց, ուրանք մըր հետ չըն խոսա, իքրամ աղաթ տեղն է, հաց կբերին, շուր կբերին, մենակ հետ մի չըն խոսա։ Իրեք օրն օր թըմավ, մեկ լէ տեսնամ, մըր տանտեր վերցուց ասեց. «Վո՛ւյ, ասսու բարին, դուք բարով եք էկի»։

Ասի. «Ջանը՛մ, հ՚առջին հեղ տվի բարև հ՚որի՞ չառար, մըր հետ չըք խոսեք»։

Ասեց. «Մը՞ր հ՚էրկրի ադաթ գինա՞ս իմալ է, մսաֆըր օր կիգա, կիտա բարև, իրեք օր զէնդոր բարև չառնե, հետ չխոսա, չէղնի մսաֆըր ասե, խստու զիմ բարև շուտ առավ, օր ես էլնիմ էրթամ, իրեք օրն օր թմավ, նոր կառնե զբարև, հետ կխոսա»։

Մանցինք հոդ, օրըմ, էրկու, էդ մարդն է, հարցուց, ասեց. «Ախպըրտա՛նք, դուք ի՞նչ տեխեն իք, իմա՞լ իք էկի էդա դինն»։

Պատմինք, թե մըր թագավորի հետ էկանք կռիվ։ Մըր թագավորի ասքյար կոտրավ փախավ, մենք լէ կորցուցինք զճամբախ, էկանք հ՚ոդա հ՚էլանք դուրս։

Ասեց. «Հ՚էլեք, տանիմ զձզիկ, ցուցում ձըր թագավորի հ՚էրկրի ճամբախ, զքզիկ հանիմ վըր ճամբուն ու դառնամ հ՚իգամ։ Հ՚էլանք գիշերով հ՚ընկանք ճամբախ, էկանք տեսանք, օր սարըմ

Ինչ էդ քաղքի դեմ, ինչ օր. օր ցերեկ, մութ ի՞նչ է, չգինա։

Ասի. «Ախպե՛ր, էդա ի՞նչ է հրմլա լուս կիտա»։

Ասեց. «Ձըր բան ինչ է, էդա հմլա բաներու հ՚ետևեն կընկնիք, դու ճամբորդմ՚ իք, ձըր հալի հետ, թողեք գացեք ձըր ճամբու հետ»։

Վել հասըլ ղմզի աղեկըմ բըշդեց։

Էկանք քիչըմ տեխ, ասեց. «Ախպե՛ր, քու խաթր չառնիս, ես քու հ՚ապով ասի, օր չէրթեր հ՚ընկներ փորձանքըմ, էդի Ալմաստ-Զմրուխ քարերու սարն է, էդոր տերեր մոչիմ ին, ամեկ մեկ մոչիմ՚ ղթաղիմ՚ կա, մեկ դրեր է ղուր գլուխ վըր մեկի պոչուն, փաթեր ին սար ու կանի, մարդ օր մոտենա ուրանց, կրռնին ձևրոտին հ՚իրարուց։ Էնղոնց քուն չկա. մինակ ճետ օր հ՚առչին բերան կկանչե, հավքունըմ կառնին ու կէլնին, մարդ կառցավ գնաց լցեց զուր հակուբեն, կազատի, թը չէ՚ ճար չկա,—ասեց,—Ձըր թագավորի հ՚էրկրի ճամբախ լէ էդա է, ես գինամ, գիշերով կէրթաք, բռնեք ղէդա աստղ ու դացեք»։

Բարիմնաց էղանք հ՚իրարուց, էնի դարցավ էկավ ուր տուն, մենք կանչինք զմըր աստված ու հ՚ընկանք մըր ճամբու հետ, գացինք։

Գացինք մոտեցանք-էդ սարուն, սահաթ իշի օր ճետու գահ էր, իմ ընկերն ասեց. «Դո՞ր կէրթաս, ամո՛թ չէ հ՚իգանք Ալմաստ-Զմրուխ սարու խիչեն հ՚ընցնեք ու անուն մը չէնեք էրթաք, վաղ էրթանք ուրիշներուն ասինք, ի՞նչ կասին մզիկ. վալլա՛յի, ես կէրթամ, յամ խուրճիմ՚ ալմաստ ու զմրուխ կըլնամ բերիմ, յա՛մ զիմ գլուխ կիտամ ու կիգամ»։

Վել հասըլ, իմ հ՚ընկեր քշեց զուր ձին, ես լէ հ՚ընկա հ՚ետև։ Էդ Ալմաստ սարու հ՚առչև պզտիկ ջուրըմ կեր, էկանք հ՚ընցանք զէդ ջուր, ճետ կանչեց։

Շենքացինք զմոչիմներ, հ՚էլանք սար, չկռահեցին, լըցինք զմըր հակուբեկ ու դարցանք. ես հ՚առեջ ենք, իմ ընկեր լէ՚ իմ ետև։ Օր դարցանք, ես շենքացի զմոչմներ հ՚ընցա, հ՚ընցա ջրի էնդին, մեկ լէ տեսնամ ճվոցըմ էկավ, սարու ձեն թիթրամիջ կէղներ. դառնամ հ՚ետևս իշքեմ օր՚ ընկեր չկա, ասի՚ «Վալլա՛յի, զիմ ընկեր բռնին»։

Դող առեր է զիս, չըմ հ՚իշխնա տեխես խըլվըլա, կասիմ հա, զոտքս փոխիմ՚ կրռնին, քիչ-քիչ ընծիկ սիրտ տվի, դո՞ր էրթամ, դո՞ր չէրթամ, վալլա՛յի, պիտի դառնամ էրթամ էդա քաղաք։

Դառցա, էկա էդ քաղաք, էկա էդ մարդու դուռն հ՚իջա, քաշեցի զիմ ձին կապի, հարձրկեցի զիմ հակուրեն, առա գացի վի։

Իմ խոնախսահապին ասեց. «Ախպե՛ր, դուք գացիք օր էրթեք-ձըր հ՚էրկիր, իմա՞լ էղավ դառցար էկար. քու ընկերն հ՚ո՞ւր է»։

Պատմի. «Ախպեր, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ։ Գացինք ֆըլան տեխ, հըմլա էկավ գլուխ մի»։

Էդ մարդն օր ալմաստն ու զմրուխ տեսավ, մազեր թիք կանան։

Ասեց. «Դո հա՛յ, քու փոր արճիճ էր լցուկ, դու գացիր առար զէդի էկար, զամանդան մարդըմ չլսվեր է, օր դացեր է էդ սար ալմաստ բերի»։

Մանցի էդ տեխ, վախեցա, ասի. «Զէ՞ղնի էդ մարդ հ՚էլնի թըմա էնե իմ հարստության, զիս մորթե, առնե զիմ խուրճին ուրին»։

Հէլանք լուսուն, հարցուց, ասեց. «Տզա՛, քզիկ տուն տեխ, կնիկ ու ճիժ կա՞»։

Ասի. «Զէ՛»։

Ասեց. «Զիմ ախչիկ չը՞ս առնի։ Եկո զիմ ախչիկ առ, իդամ քզիկ տունըմ, գնա մանցի էդա տեխ, էլ ի՞նչ կէրթաս»։

Իմ փարի ու իմ ջանի կսկծուն էլա զէդ մարդու ախչիկ առա ու մանցի էդ քաղաք։ Չորս-հինգ տարի մանցի էդ կնկա խեչ, ընծիկ էղավ էրկու տղա ու ախչիկըմ։ Ավուրըմ մեկ գլուխս կցավեր, տրքտրքացի, էկա մտա ներս, իմ կնիկ լսեց, ասեց. «Մա՛րդ, խեր էղնի, հ՚որի՞ կտրքտրքաս, չէղնի՞ հիվանդ իս։ Մա՛րդ, դու ու քու աստված չէղնի հիվընդնաս, էդ քաղքի մեջ ատաթըմ կա, մարդ օր հիվընգնա, կտանին զէրիկ ու կնիկ սաղ-սաղ կհորին, կնիկ հիվընդնա, զկնիկն ու ղիրիկ կտանին սաղ-սաղ կհորին»։

«Ջանըմ, էդա հըմլա բան կէղնի՞, մարդ հ՚էսօր կհիվընդնա, վաղ կսաղնա, խոմ որն օր հիվնդցավ՝ չմեռնի՞, ցավ ու չոռ մարդու վրեն կիգա, խոմ սարուն ու ձորուն չի՞ գա»։

Ասեց. «Մը՛ր հէրկրի ադաթ հըմլա է, քղիկ կասիմ, չասիս վերջ, իմ կնիկ չասեց»։

Էլ իմ վախենելուն տեխ չէ ցավեր, չընք հ՚իշխնե ճնկթուն հանեք։

Օրըմ լէ տեսա հըմլա չէղնի, ասի.—Կնի՛կ, ախըր իմալ կէղնի։

Ասեց. «Մա՛րդ, չէղավ, հ՚էլի առ քու աներոջ մոտեն իլին, գնա քու հ՚էրկիր, զքու տուն ու տեխ ֆքրի ու դարձի եկո, ես ու իմ ճժեր զմըր իդարեն կէնեք»։

Հ՝իրկունմ՝ նստուկ ենք, վերցի ասի. «Անե՛ր աղա»։

Աներն ասեց. «Հրամե՛, փեսա ջան»։

Ասացի. «Միտքս հ՝ընկեր է իմ հ՝էրկիր, ընծիկ իզին տուր, էրթամ, իշքիմ ու դառնամ հ՝իգամ»։

Աներն ասեց. «Փեսա՛ ջան, ո՞րն է զքու ձեռք բռնի, ազատ իս, կուզիս զնա, կուզիս մանցի, կուզիս զքու կնիկ ու ճիժ լէ քու հետ առ ու գնա»։

Հ՝էլա բռնեցի զիմ բեռներ, բառցա զիմ տուն ու հ՝ընկա ճամբեն։ Էկա, շատ էկա, քիչ էկա, էկա դաշտիմ՝ մեջ զբեռներ տվի թափել, զարկի զիմ չադրն ու նստա։ Բրդուճըմ հաց կերանք, մեկ լէ տեսնամ բութեմ՝ ամպ հ՝էլավ, խադրճի բաշուն ասի. «Խադրճի բա՛ջի, զբեռներ բառցի, քանի հեղեղ զմզիկ չվերցի»։ Էնդոնք զբեռներ քաշեցին շրիդ, հար ես զիմ չադր քակեցի, հար պըլուկեցի հ՝իրար, մեկ լէ տեսնամ հեղեղ զմզիկ վերուց, դառնամ իշքիմ խաթրճի, խաթրճի չկա։ Անձրև զարկեց վրեն մի մոլրանք ու հ՝ընկանք սարեր ու ձորեր, էկանք ասրովանք մեշին, նը՛ կառնաք հ՝առեջ էրթանք, նը՛ կառնաք հետ դառնանք։ Մեկ լէ տեսնամ շըվոդըմ էնդիեն հ՝էլավ բռնեց զիմ կնկա ձեռքն ու առավ գնաց, ես ու իմ իրեք ճիժ լէ հ՝ընկանք հ՝ետևեն գացինք։ Գացինք, գացինք հասանք հ՝էրիմ՝ դուռ, ասի. «Զայիր գիցավ մենք խարիբ ինք, էկավ մզիկ ճամբա կցուցու, ազեկութեն կէնեա»։ Գացինք հ՝էրի դուռ, առավ զիմ կնիկն ու մտավ ներս, մանցինք ես ու իմ ճժկներ կանուկ դուռ։ Գեժդան գեժ տեսա օր իմ կնիկ չէկավ, ասի՝ էրթամ տեսնամ իմա՞լ էղավ էդի։ Հ՝իգամ ի՞նչ տեսնամ աղեկ է։ Էկա տեսա օր էդ դըզմամ ջըվոդ գրկե զիմ կնիկն ու պառկի։

Ասի. «Մա՛րդ, էդ ի՞նչ էր էրիր, տուր զիմ կնիկ, առնիմ էրթամ»։ Վերցուց զիմ թևն ու առավ հայ մըջ հորուն, էնտեխ յոթ գազկան հորըմ կեր։ Գեժդան գեժ, իմ ճժեր կիշքին օր ես լէ չիկա, կհ՝էլնին ուրանք կիգան։ Հ՝առջին հեղ մեծ տղեն կհ՝էլնի կիգա, կբռնե գլխեն կմարմնգե, ջանդակ էկավ իմ խեչ, գլուխ մնաց ուր խեչ։ Էնդոր պզտիկ կիգա, էնդոր թևեն ըստհաղ կբռնե մարմնգե, ջանդակ էկավ իմ խեչ, թև մնաց ուր ձեռք։ Հ՝ըմնուց վերջ ախչկա ջանդակ էկավ. տեսնամ նը՛ գլուխ կա վրեն, նը՛ ոտք, նը՛ թև։

Մեր ուրանց նստուկ է, կիշքե, ձեն չհանե, իմալ օր հմկավուս ժամանակն է՝ էրեխեն մոր հ՝առեջ կկտրին, ծեն չըն հանի, ես կասիմ՝ զայիր կվախենա. ձեն չհանի։

Հեղըմ լէ տեսնամ զէգոնք օր թալեց հորու մեջ խըլըսավ,

գնաց, առավ ջաղցիմ քար, բերեց դրեց հորու բերնին։ Ասի. «Հմլա չէղնի, էդ մարդ զիս լէ հ՚ոդա սաղ-սաղ կսպանեն»։ Հանեցի զիմ խանջալ, մեկ-մեկ էրի թարանջա-թարանջա, հ՚էլա շըմփլա քարու տակ, սորա մեկ կշտեն ծակեցի հ՚էլա դուրս, տեսա օր էդ մարդ գրկեր է զիմ կնիկ, զձեռք դրեր է գլխու տակն ու կխռան, ուր թուր լէ կախուկ է ուր գլխու վերև։ Հ՚իջուցի։ Ասի՝ «Զարկիմ դեմ, վախենամ իմ կնկա գլուխ լէ հետ թռնի, չզարկիմ, վախենամ հ՚իմնա, հ՚էլնի զիս սպանեն»։ Մեկ լէ տեսնամ ձեռք քաշեց իմ կնկա գլխու տկեն. օր քաշեց, զթուր թալի, գլուխ թռավ գնաց հ՚ընկավ դռան հ՚ետև։

Ասեց. «Դըրբըմ լէ»։

Ասի. «Կտրճի դըրբ մեկ է»։

Օր սպանի, խըլըսա, տեսնամ իմ կնիկ կտրփվի ու կիլա, զմազեր կքակե, ալալորում մը է դըրի, աստված ինք նշանց չի տա։

Ասի. «Կնի՛կ, խեր էղնի, հ՚ո՞րի հըմլա մորմոր կիլաս, խոմ քու ոզայով չէր, զոր էր էրեց, ես լէ գինամ ուր նամուսի հ՚ապով կիլա ու զուր ճժեր կիլա։

Ասեց. «Մա՛րդ, հ՚ո՞րի դու գինաս, զիմ նամուսն ու զիմ ճժե՞րն է կիլամ»։

«Հպա ի՞նչ է կիլաս»։

«Կիլամ հ՚որի՞ դու զէդ մարդ սպանեցիր»։

Ասի. «Դու ասել է, թե էդ մարդ հ՚ա՞պով է կիլաս»։

«Հա՛, վալլայի»։

Ասի. «Վու, քու հէրիկն անիծուկ էղնի, օղորդ օր ասած ին՝ Կնկան փիր չկա. թուրըմ թալեցի, կտրեցի զգլուխ, վերցի զիմ փետ, ուխտ էրի, օր հեղըմ լէ կնկա կռտապ չընկնիմ, մեկ լէ զաստվորի սուտ անուն իմ վրեն չբերիմ. զարձա էկա իմ տուն։ Էկա տեսա օր իմ խաթրջիք բերած ին զուրանց բեռներ, թափած ին իմ տան դուռ ու դարձած գացած։ Ասի. «Աշխըրքի մեջ հըմլա սաղլամ մարդ լէ կէղնի, էն օր ուխտ իմ էրի, հեղըմ չպիտի կարգվիմ, ասի կանի, զիմ ունեցած չունեցած պիտի էնիմ խեր ու խերյաթլամա»։

Էդ է՝ օր լուսուն կհ՚էլնիմ, փարա կցրվիմ, կէրթամ իմ դուքան, հ՚իրկուն կհէլնիմ, իմ գուքնից փարա կցրվիմ, կիգամ մըտնիմ իմ տուն։

Նոր տղեն ջնորհակալ էղավ ուր աղից, հ՚էլավ էկավ հասավ ուր ընկերներուն, պատմեց մանեն էդա էր օր իմ աղեն փարա կցրվեր։ Էկավ հասավ ուր տուն։